



Ինչպէս Մէճմուսը Հափաթիս, բաղար, հօրթու վէճու մա կիւնէրնունն մասու պու գրեթատու եւեփիցէ նէշը օրու նաճաղ տըր, Սէնէլիլի բէշին օլարադ 200, Ալթըր ալըլը 140, Իււշ ալըլը 60 դըշ. վէճ թանէսի 1 դըշ. Տալարար իշին պէշէր նու մէրօսունա բօսթա խճրէթի ալընաճաղը խաստէթէն պէշան օլունուր :



Իմանաթըն պէշէր արարադ պիւր տէֆա-լըդ 3, Իքի տէֆա իշին 2, Իււշ տէֆա իշին 1, զուրուշ, Իււշ տէֆատան ղիյատէ օ-լան, վէճ ղալէթ ուղուն իմանաթ իշին ալ-րըճա բաղարըդ օլունուր : Տալարարտան կէլէն մէքթուպ վէճ իմանա-թըն բօսթա մէսարիֆիլէրի, կէժուէրէնէրին Իւղէրինէ օլունուր պէշան օլունուր :

ՈՒՄՈՒՐՈՒ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ, ՊԵԼԷՏԻՅԷ, ՎԷ ԻԼՄԻՅԷ

ՎԷ ՄԷ ՎԵՏԵ ՆԵՓԻԱՅԵ ՄԵՅԻՐԷՅԷ ՄԻՐԹԵԱԼԻԳ ՂԵՋԷՐԵ

ԱՆՔԱՌԱՆԿ 6 ՄԱՐՏ

Թարափըմըզա վարիտ օլան պիւր վարադ ա արը :

Վերջնական պատասխան անունով հրատարակուած տետրին հեղինակէն անանուն մէկ մը, պատասխան կը պա-հանջէ իր մէկ հարցմանը Տաճկերէն լեզու հրատարակած տետրակի մը մէջ : Արհիպատիւ Սուքիաս Սրբե-պիսկոպոսին տետրակին վերջնական անունը թէպէտ չներէր նոյն նիւթոյ վրայ ուրիշ խօսք աւելցնելու, բայց հարցնողին տկարութեանը ղիճանելով համաւօտիւ քանի մը խօսք դարձը-նելու յանձնառու եղանք :

Արդ Տաճկերէն տետրակի անա-նուն հեղինակը երկու հակառակ նա-խադասութիւններ կը քաղէ, մէկը Պիոս քահանայապետին գաղտնի ժողովոյն առթիւ զրաժ կոնդակէն, միւսն ալ վերջնական պատասխան ա-նունով տետրակէն, և կը հարցնէ. թէ Պատիւ և Սուքիաս Եպիսկոպո-սին առ նախադրութիւններէն որը ճշմարիտ է և ուղիւ, և որը մուրա-կան, և կուզէ համաւօտ և բացայայտ պատասխան մը ընդունել, և Պապին հեղինակութիւնը բաւական չը համա-րելով անոր ընծայած նախադասու-թեան վրայօք, իր գրութեան վերջե-րը կը դառնայ բովանդակ ախարհքին կոթողիկէ գիւրդին և ժողովրդեան կը սեփականէ, իսկ ինչ պատճառ և ինչ իրաւունք ունէր առ անանուն հեղինակը յիշեալ նախադասութիւն-ները քաղուածոյ յառաջ բերել, և ո-րոնց կընծայուին անոնց անուան տակ, առանց գործածած բառերին սղ-հելու հրատարակել : Ձայնալով ուրե-մէն այսպիսի իրաւունք մը տալ իրեն, յառաջ բերուած նախադասութիւն-ները ինքրորդին կը քննենք առանց ասոր կամ անոր յատկացնելու : Ուստի Պապին ընծայուած նախադասութիւն-նին այս է :

«Ծարգտա պուլունան իսէվիլէրին «հէր պիւրինն այրը այրը տախի քիլի-աւեճէ նիդամիլիէսին վէ իսարէսինէ-աժիւտալիէ էթմէ յէ Բօմա քահանա-յապետէրինին սէլահիլէթի վար տըր, «վէ օրմար տա՝ Բաթմիլը մէզէպի «մէվատը տէնիէսինտէն տիր :»

Աս նախադասութեան մոլորական ըլլալը կամ չըլլալը իմանալու համար, կրնայ անանուն հեղինակը բաղդատել զայն եկեղեցիէն ընդունուած ուրիշ նախադասութիւններուն հետ : Կը զը-րէ Ստորին քահանայապետը «ընդ-գէմ հարցն սահմանադրութեանց չը-նորհել ինչ կամ փոխել ոչ է յիշխան ու-

թիւն և ոչ իսկ պար աթոռոյ Հռով-մայ : Կահանան փորինտիոյ ժողովը-վը, թէ Հռովմայ քահանայապետաց յառաջնութիւնը առջի ժողովքներով հաստատուած և որոշուած կանոնե-րուն վրայ պահուի : Կան կերպով ինչ պէս որ արեւելեական ժողովոց և սրբ-բազան կանոնաց մէջ բովանդակած է, ուստի և կը բացատրէ, այսինքն է անվթար մնալով Արևելեան Պատրի-արքաց ամեն առանձնաշնորհութիւն-ները և իրաւունքները : Կը զրեն Գերմանիոյ եպիսկոպոսունք վատի-կանեան ժողովքէն ետքը :

Պապին իշխանութիւնը կրտսն «ա-մենեին այնչափ իշխանութիւն չէ, այլ կը չափաւորեն զայն յայտնալ ճըշ-մարտութիւնները, յատուած այլին օ-րէնքները, եկեղեցւոյ Ստատուածքի-նէրէն : Կը չափաւորէ զայն նոյն իշխանութեան ընդունած վախ-ճանը, որն որ եկեղեցւոյ չինութիւնը պիտի ըլլայ, և ոչ քակտումը, կը չա-փաւորէ զայն աստուծոյ յայտնալ ունի այս վարդապետութիւնը, թէ եկեղեցական կարգին քով քաղաքա-կան կարգ մըն ալ կայ, որուն ծագու-մը նոյնպէս Ստատուած է, և իւր կար-գին մէջ ծայրագոյն է : և որուն ա-մեն բանի մէջ որ նոյն կարգին կը վե-րաբերին և բարոյական օրինաւորու-թիւն ունին պէտք է հնազանդել ի խղճէ : Երբեք Պապին ինչուան հի-մայ ունեցած իշխանութեանէն աւելի բան չվերաբերեց իրեն, և Պապն ալ չէր կրնար ընդունել, այլ այնչափ մի-այն խօսեցաւ, և կրկնեց այն իշխա-նութեան վրայօք, որչափ որ եկե-ղեցւոյ խիղճը և գործածութիւնը կը փկայէր, և կուեցնեն նոյն Գերմա-նիոյ եպիսկոպոսները «Զայտի խաղէ-ութիւն է վատիկանեան յաղովոյն ո-րոշողութիւններէն հետևեցնել, և թէ Պապական բոլոր նախկին կոնդակները և սահմանադրութիւնները որոնք տէ-րութեանց և քաղաքական իրաւ կը վերաբերին, հիմայ անսխալ վճիռնե-րու կարգ անցնին : և Ստորեք բարե-կարգական օրէնքներ և պատժական դատաստաններ են, որոնք բնակա-նապէս ոչ անփոփոխ են, ոչ ալ անա-խաղբիւրք, այլ ուրիշ մարդկային դը-րական օրինաց նման վիճակ ունին : Տեսաւ անանուն հեղինակը թէ ինչ իմաստով կընդունին և կը քարոզեն ուղղափառ եպիսկոպոսունք Պիոս Թ. ին խօսքերը :

Բայց զարմանալու չէ անանուն հե-ղինակին այսպիսի ծայրայեղ վարդա-պետութիւն մը քաղելը Պապին իշխա-նութեան վրայօք, որովհետեւ արդէն

չատ մը այսպիսի նախադասութիւն-ներ իրեն նմաններուն բերանը ստէպ կը պտըտեն : օրինակի համար Պապը ամեն դրական օրէնքէն վեր է, Պապը ամեն եկեղեցական ընչից տէր է, Պա-պը ամեն բան է, և ամեն բանէն վեր Պապը իրաւունքէն աւելի, իրաւանց հակառակ և արտաքոյ իրաւանց կրնայ ամեն բան դործել Պապը ամեն պատ-ճառներուն պատճառն է և բանի մը պատասխան տալու չէ, որովհետեւ առաջին պատճառ է և իր գործքե-րուն պատճառը հարցնելը իր իշխա-նութիւնը, որով կաթողիկոսութիւնը ու-րանալ է :

Այսպիսի և ասոնց նման նախադա-սութիւնները, եկեղեցին փայլ լրած չէ յայտնի և բացայայտ մերժելու, որովհետեւ հասարակաց դատաստա-նին առջև արդէն ընդունելութիւն չեն գտած և ծաղրելի եղած են, և եթէ վատիկանու ժողովոյ ժամանակ իսկ այսպիսի նախադասութեանց դէմ ոմանք խստութեամբ վարուիլ առա-ջարկեցին, բայց քանզի ժողովը ան-կատար մնաց, ուստի և այսպիսի ծայ-րայեղ վարդապետութեան քարոզե-րը աւելի համարձակութիւն գտան, և ցաւալին ան է որ ոմանք նոյն իսկ ժողովը համաժող կարծեցին իրենց և այսպէս ալ հրատարակեցին, որ իշխանութեան յաւատ և անարդանաց գործ էր, որովհետեւ աւելի բան աւե-տարանողի կնիք ընծայած եղան ժո-ղովոյն որով և առաքելական դատա-պարտութեան արժանացած : «Այլ թէ մեք ասէ առաքելաւն, «կամ հը-րեշտակը յերկնից աւետարանեցէ ձեզ նըղովալ լիցի :» Բայց քիւ ի մէնջ այսպիսի անարդանաց դատաստան ընել, ուստի և կրտսնք մեր չորս եպիս-կոպոսաց ի 29 հօկտ. 1872 ին հրա-տարակած կոնդակովին մեկտեղ, որուն համաձայն է և վերջնական պա-տասխանին խօսքերն ալ, «վատի-կանեան ժողովը քահանայապետաց իշխանութիւնը բովանդակ տիեզերաց վրայ և անձանց անընդմիջապէս և անխտիր տարածած ատենը նոյն վա-տիկանեան ժողովոյն արարողութեան մէջ պարունակած գէթ պէտք են իմանալ առաքելական եկեղեցական աւանդութիւնները իրրեւ չափ և կո-պար նոյն իշխանութեան, և ոչ թէ մերժել թէ նոյն վատիկանեան ժողովը վեր ի վայր յուղած ըլլայ եկեղեցւոյ լիստուածային հաստատութեանը և բոլոր տիեզերական ժողովոց և աւան-դութեանց բարոյական ոյժը :

Նոյնպէս մեր Թ. վարդապետաց ի 6 հօկտ. 1870 առ Մ. Բլուլիմ ուղղած թղթովին կրտսնք «վատիկանեան ժողովոյ հաւատոյ սահմանադրութիւ-նը փորենտեան ժողովոյն հաւատոյ վճիռը ետ կանչած չըլլալով, վատի-կանեան սահմանադրութեան մէջ փը-լորենտեան վճռոյն հակառակ իմաստ չենք կրնար ընդունիլ : Կարծենք թէ բաւական բացայայտ խօսեցանք լինա-նուն հեղինակէն յօրինուած առաջին նախադասութեան վրայօք, որոնք բը-նականապէս յայտնեցին միւս նախա-դասութեան որպիսութիւնն ալ, որն որ վերջնական տետրակին կընծայուի-լատ այսմ հշմարիտ վարդապետու-թեան տէր գիտենք Պիոս Թ. Գահա-նայապետը և ոչ հերետիկոս, որով և ուղղափառ եպիսկոպոսաց կարգին մէջ կը յիշենք զբարձր Երբեքան պաշտա-մանց մէջ, աղաչելով զՍտուած շնոր-հէլ մեզ զնոյն ընդ երկայն աւուրս Ուղիւ Վ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Նոյն-պէս և վերջնական տետրակին վար-դապետութիւնը, ըստ որում փո-րենտեան ժողովոյն վարդապետութիւ-նը կրկնած է, ուղղափառ գիտենք և ոչ հերետիկոսական, ուստի և իրա-ւամբ կը կրկնենք, ոչ փորենտեան ժո-ղովոյն վճիռը վատիկանեան ժողովոյն կամ թէ բնեք Պիոս Թ. Գահանայա-պետին խօսքերուն բացատրութիւնն է, և ոչ վատիկանեան ժողովոյն և Պիո-սին խօսքերը փորենտեան ժողովքին վճռոյն հակառակ կամ բացասական իմաստ մը կրնայ պարունակել : Գար-ձեալ ոչ Արեւելեան պատրիարքական իշխանութիւնը Պապական իշխանու-թեան բացասութիւնն է, և ոչ ալ Պապական իշխանութիւնը Սրբեկեան պատրիարքաց իշխանութեան ոչնչու-թիւնն է : որովհետեւ այս պատրիար-քութիւնները ոչ անուանական են, և ոչ փոխանորդական : Ըստ այսմ եթէ անանուն հեղինակը իրմէ յօրինուած հակասութեանէն ազատիլ կուզէ, և փը-լորենտեան ժողովոյն և եկեղեցւոյ վար-դապետութիւնը չը մերժելով միան-գամայն Հռովմական դահուռն պատուոյն հոգ տանիլ կը կամենայ, ուրիշ ճամ-բայ չկայ եթէ ոչ պէտք է որ մեր և վերջնական տետրակին ըսածները կրկնէ, թո՛ղ որ իրեն նմաններուն պատ-ճառաւը Հռովմական դահուռն անունը բաւական հայհոյեցեալ ի մէջ ազգաց, որովհետեւ իրենց ծայրայեղ բացատ-րութեամբը դաւանութիւններն քրե-թէ կրօնական համաձայնութեան մը կերպարանք առաւ, և Պապական իշ-խանութիւնը, որ քա- ի մէնջ, գրեթէ անձնաւորական միաւորութեան մը հա-

